ԳԱՐԵԳԻՆ Բ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(28 հոկտեմբեր, 1999 թ.)

ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ՝ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ԵՎ ՍԻՐԵՑՅԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴ ՀԱՅՈՑ

Հայաստանի և ողջ հայության համար ծանր և դժվարին այս պահին, երբ վտանգված է մեր ժողովրդի 10-ամյա մաքառմամբ ձեռք բերված անդորրը և անօրինակ զոհողությունների ու զրկանքների գնով նվաճված պետականությունը Հայաստանի Հանրապետության, մեր աղոթքն ենք բարձրացնում առ Աստված և հայցում Տիրոջ զորակցությունը՝ պահպանելու խաղաղությունը մեր Հայրենիքի և ողջախոհությամբ առաջնորդելու մեր ժողովրդի զավակաց:

Անչափելի է մեր վրդովմունքը Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի շենքում սահմռկեցուցիչ ահաբեկչության աննախադեպ ոճրի առիթով, որին զոհ գնացին մեր ժողովրդի ընտրյալ զավակները, ազատ, ժողովրդավար և օրինահարգ պետության կերտման դժվարին առաքելության նվիրյալները՝ Ազգային Ժողովի նախագահ տիար Կարեն Դեմիրճյանը և Հայաստանի Հանրապետության վարչապետ տիար Վազգեն Սարգսյանը:

Նրանք զոհվեցին որպես նահատակներ Հայրենիքի և ժողովրդի նկատմամբ իրենց սրբազան պարտքի կատարման պահին:

Հավատում ենք, որ մեր ժողովուրդը, հավատարիմ իր ոգուն և նկարագրին, Տիրոջ առաջնորդությամբ առավել պիտի համախմբվի հանրապետության ղեկավարության շուրջ՝ դատապարտելու Աստվածամերժ այս ոճիրը՝ հաստատելով իր անվերապահ զորակցությունը հայրենի պետության և իր գալիքի հանդեպ:

Հանուն Հայ Առաքելական Ս. Եկեղեցու՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսության, նվիրապետական Աթոռների, ողջ հոգևոր դասի, Ազգային-եկեղեցական ժողովի, Գերագույն Հոգևոր Խորհրդի և ողջ հավա-

պացյալների, խորապես ցավակցում ենք Ձեզ և համայն հայությանը, վշտակից ենք անմեղ զոհերի ընտանիքներին և բոլոր հարազատներին:

Հայրաբար հորդորում ենք անհապաղ ազատել բոլոր պատանդներին:

Թող Ողորմածն Ամենակալ երկնային արքայությանն արժանացնի անմեղ զոհերի լույս հոգիները և հանգչեցնի սիրո և խաղաղության մեջ:

Ձեզ, հանգուցյալների մերձավորներին և մեր ողջ ժողովրդի հարազատ զավակաց մաղթում ենք Սուրբ Հոգու մխիթարություն և սփոփանք:

Բյուր օրհնություն և խորին խոնարհում հանգուցյալների պայծառ հիշատակին:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

ԳԱՐԵԳԻՆ Բ
Ընդրյալ Կաթողիկոս Ամենայն Հայոց